ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ԹԻՎ 085-Ա
ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջեի եկամտային մասը 2024 թվականի 1-ին կիսամյակում ունի հետևյալ տեսքը.

	Պլան /հազար դրամ/	Կատարված /հազար դրամ/	
Վարչական բյուջե ,	1 285 719.0	1 262 453,7	98,2 %
որից՝ սեփական եկամուտներ	461 664,8	438 399,7	95 %
Ֆոնդային բյուջե	816 870,3	625 498,7	76,6%
որից՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկ.	300 000,0	100 000,0	
անշարժ գույքի իրացումից մուտքեր	130 600,3	139 033,6	
Ընդամենը	1 802 589,3	1 787 952,4	99,2%

Արմավիր համայնքի 2024թվականի բյուջեն առաջին կիսամյակում ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ համամասնություններով.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հարկային եկամուտների գծով առաջին կիսամյակում նախատեսված 281 275,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 233 249,6 հազար դրամ կամ կատարվել է 82,9% -ով՝ այդ թվում.

1. Հողի հարկի գծով մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 21 524,8 հազար դրամ, որից ըստ գյուղերի՝ Այգեվան- 421,4 հազար դրամ,Արաքս-1147,1 հազար դրամ,

Խանջյան – 1421,2 հազար դրամ, Լենուղի- 873,2 հազար դրամ, Լուկաշին-2918,1 հազար դրամ, Հացիկ- 2906,2 հազար դրամ, Մայիսյան - 807,9 հազար դրամ, Մյասնիկյան-2702,1 հազար դրամ, Նորավան-343,9 հազար դրամ, Սարդարապատ-2742,5 հազար դրամ:

2. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար մուտքեր չեն նախատեսվել, փաստացի մուտքագրվել է 2932,5 հազար դրամ:

3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով նախատեսված 184 505,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 160 040,1 հազար դրամ կամ կատարվել է 86,7 %-ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան-2328,5 հազար դրամ, Արաքս-2853,3 հազար դրամ, Խանջյան- 4228,4 հազար դրամ, Լենուղի - 1754,2 հազար դրամ, Լուկաշին- 4111,1 հազար դրամ, Հացիկ- 5286,2 հազար դրամ, Մայիսյան – 4354,9 հազար դրամ, Մյասնիկյան - 10097,0 հազար դրամ, Նորավան–3108,50 հազար դրամ, Սարդարապատ-14028,3 հազար դրամ:

4. Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկի պլանով նախատեսված 96770,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 73209,5 հազար դրամ կամ կատարվել է 75,7 %-ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան – 624,4 հազար դրամ, Արաքս- 2011,7 հազար դրամ,Խանջյան- 2051,4 հազար դրամ, Լենուղի- 1574,7 հազար դրամ, Լուկաշին – 3302,8 հազար դրամ, Հացիկ- 3061,2 հազար դրամ, Մայիսյան- 5194,2 հազար դրամ, Մյասնիկյան – 1718,6 հազար դրամ, Նորավան – 610,8 հազար դրամ, Սարդարապատ-4783,8 հազար դրամ:

2. <u>ՏՈՒՐՔԵՐ</u>

Տուրքերի գծով առաջին կիսամյակում նախատեսված 49 285,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 56 141,3 հազար դրամ կամ կատարվել՝ 113,9 %-ով:

1. Պետական տուրքերի գծով նախատեսված 20 000,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 19 938,9 հազար դրամ կամ կատարվել՝ 99,7 %-ով:

2. Տեղական տուրքերի գծով նախատեսված 29285,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 36202,4 հազար դրամ կամ կատարվել՝ 123,6 %-ով:

3. Այդ թվում՝

ա) համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների և շինությունների շինարարությունը սկսելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 7560,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2596,0 հազար դրամ կամ կատարվել է 34,3%,

բ) համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու աշխատանքներ կատարելու թույլտվության մուտքերի գծով տարեկան նախատեսված 714,0 հազար դրամի դիմաց 1-ին կիսամյակում մուտքագրվել է 858,0 հազար դրամ ,

գ) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար նախատեսված 48,0 հազար դրամի դիմաց փաստցի մուտքերը կազմել են 35,0 հազար դրամ կամ կատարվել է 72,9 %-ով,

դ) համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 8196,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 10535,6 հազար դրամ կամ կատարվել է 128,5%-ով, որից ըստ գյուղերի հավաքագրվել է. Այգեվան- 135,0 հազար դրամ,Արաքս- 816,5 հազար դրամ, Խանջյան- 190.0 հազար դրամ, Լենուղի- 150,0 հազար դրամ, Լուկաշին-209,0 հազար դրամ, Հացիկ-357,3 հազար դրամ, Մայիսյան-130,5 դրամ, Մյասնիկյան- 476,0 հազար դրամ, Նորավան – 69,0 հազար դրամ , Սարդարապատ- 586,8 հազար դրամ,

ե) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 1400,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2619,7 հազար դրամ կամ կատարվել է 187,1 % - ով,

զ) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար 2788,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 5155,0 հազար դրամ կամ կատարվել է 184,9 %-ով,

է) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00- ից հետո աշխատելու թույլտվության համար մուտքերի գծով տարեկան նախատեսվել է 1215,0 հազար դրամ, փաստացի 1-ին կիսամյակում հավաքագրվել է 2037,5 հազար դրամ կամ տարեկան պլանը կատարվել է 167,7 %-ով,

ը) համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մուտքերի գծով 1-ի կիսամյակում նախատեսված 5826,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 7707,5 հազար դրամ կամ կատարվել է 132,3 %-ով:

թ) համայնքի տարածքում մարդատար տաքսի ծառայություն ընթացիկ տարում իրականացնելու թույտվության համար մուտք չի նախատեսվել, փաստացի մուտքագրվել է 50,0 հազար դրամ,

ժ) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տարեկան պլանով նախատեսվել է 1200,0 հազար դրամ եկամուտ, արդեն իսկ 1-ին կիսամյակում փաստացի հավաքագրվել է 1204,0 հազար դրամ կամ կամ տարեկան պլանը կատարվել է 100,3 %-ով,

ի) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 1354,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1554,2 հազար դրամ կամ կատարվել է 114,8 %-ով,

լ) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության

համար նախատեսված 600,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 800,0 հազար դրամ կամ կատարվել է 133,3 %-ով:

3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

1. Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 821 655,2 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 821 655,2 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով, որից՝

ա) պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով նախատեսված 820 324,2 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 820 324,2 հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով:

բ) պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսված 1331,0 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1331,0 հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով:

2. Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 512 262,6 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 386 465,1 հազար դրամ:

4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ եկամուտներից մուտքերի գծով նախատեսված 133 376,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել 151 407,5 հազար դրամ կամ կատարվել է 113,5 %-ով:

Նույն թվում՝

1. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության գծով նախատեսված 17830,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 21102,2 հազար դրամ կամ կատարվել է 118,3 % - ով, որից ըստ գյուղերի հավաքագրվել է. Այգեվան – 338,0 հազար դրամ, Արաքս – 387,7 հազար դրամ, Խանջյան – 893,1 հազար դրամ, Լենուղի – 865,6 հազար դրամ, Լուկաշին – 49,2 հազար դրամ, Հացիկ- 405,6 հազար դրամ, Մայիսյան – 165,0 դրամ, Մյասնիկյան- 485,1 հազար դրամ, Նորավան - 67,7 դրամ , Սարդարապատ- 206,1 հազար դրամ:

2. Գույքի վարձակալության գծով նախատեսված 1022,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1116,8 հազար դրամ կամ կատարվել է 109,3 % - ով:

3. Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների գծով պլանով նախատեսված 2399,0 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 2398,8 հազար դրամ:

4. Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարների գծով նախատեսված 2210,0 հազար դրամի փաստացի մուտքը կազմել է 3447,1 հազար դրամ կամ կատարվել է 156,0 %-ով:

5. Տեղական վճարների գծով նախատեսված 97 942,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 103836,5 հազար դրամ կամ կատարվել է 106,0 % - ով, այդ թվում աղբահանության վճարների գծով նախատեսված 34035,5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 42070,5 հազար դրամ կամ կատարվել է 123,6 % - ով:

6. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների գծով նախատեսված 11200,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 17111,7 հազար:

7. Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներից նախատեսված 600,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 100 հազար դրամ:

8. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով տարեկան նախատեսված 450,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը 1-ին կիսամյակում կազմել է 535,7 հազար դրամ :

Արմավիր համայնքի 2024թվականի բյուջեի առաջին կիսամյակում ընդամենը նախատեսված 1 671 989,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1 648 918,8 հազար դրամ կամ կատարվել է 98,6 %-ով, սեփական եկամուտների գծով նախատեսված 461 664,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 438 399,7 հազար դրամ կամ կատարվել է 95 %-ով:

<u>ԾԱԽՍԵՐ /Վարչական բյուջե/</u>

Արմավիր համայնքի բյուջեի ծախսերը 2024թվականի առաջին կիսամյակում ըստ ծրագրերի կատարվել են՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. « Օրենսդիր և գործադիր մարմիններ» 01 բաժին 1 խումբ 1 դաս՝ նախատեսված 218688,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 178433,8 հազար դրամ կամ կատարվել է 81,6 %-ով:
2. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» 01 բաժին 6 խումբ 1 դաս՝ նախատեսված 59664,0 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 31627,6 հազար դրամ կամ կատարվել է 53,0 %-ով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ոռոգում՝ 04 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 42369,0 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 39903,7 հազար դրամ կամ կատարվել է 94,2 %-ով:

2. Ճանապարհային տրանսպորտ 04 բաժին 5 խումբ 1 դաս՝ նախատեսված 16000.0 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսը 1-ին կիսամյակում կազմել է 13494,6՝ 84,3%:

3. Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր 04 բաժին 9 խումբ 1 դաս՝ նախատեսված -130600,3 փաստացի մուտքերը կազմել են -139033,6 հազար դրամ :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աղբահանում 05 բաժին 1 խումբ 1 դաս՝ նախատեսված 138971,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել 134971,0 հազար դրամ կամ կատարվել է 97,1 %-ով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Ջրամատակարարում 06 բաժին 3 խումբ 1 դաս՝ նախատեսված 35000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 31651,4 հազար դրամ կամ կատարվել է 90,4 %-ով:

2. Փողոցների լուսավորում 06 բաժին 4 խումբ 1 դաս՝ նախատեսված 35660,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 24916,8 հազար դրամ կամ կատարվել է 70,0 %-ով:

3. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) 06 բաժին 6 խումբ 1 դաս՝ նախատեսված 4500,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 3383,0 հազար դրամ կամ կատարվել է 75,2 %-ով:

ՀԱՆԳԻՍՏ. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

1. Գրադարաններ 08 բաժին 2 խումբ 1 դաս՝ նախատեսված 18752,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 15188,6 հազար դրամ կամ կատարվել է 81,0 %-ով:

2. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ 08 բաժին 2 խումբ 3 դաս՝ նախատեսված 17894,4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 14273,3 հազար դրամ կամ կատարվել է 79,8 %-ով:

3. Այլ մշակութային կազմակերպություններ 08 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 20173,3 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 13358,5 հազ. դրամ կամ կատարվել է 66,2 %-ով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.Նախադպրոցական կրթություն ծախսերի գծով 09 բաժին 1 խումբ 1 դաս՝ նախատեսված 267114,8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 236503,0 հազար դրամ կամ կատարվել է 88,5 %-ով:

2.Արտադպրոցական դաստիարակություն 09 բաժին 5 խումբ 1 դաս՝ նախատեսված 98000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 93146,3 հազար դրամ կամ կատարվել է 95 %-ով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), 10 բաժին 7 խումբ 1 դաս՝ նախատեսված 14 000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 10615,0 հազար դրամ կամ կատարվել է 75,8 %-ով:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ

1.Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժին 1 խումբ 2 դաս՝ նախատեսված գումարը կազմում է 705900,0 հազար դրամ, որից 300000,0 հազար դրամը 1-ին կիսամյակում նախատեսվել է հատկացնել ֆոնդային բյուջեով կատարվող ծախսերի ֆինանսավորմանը, փաստացի հատկացումը կազմել է 100000,0 հազար դրամ:

ԾԱԽՍԵՐ /ֆոնդային բյուջե/

1.Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, հոդված 5113՝ տարեկան նախատեսված 1255927,5 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը 1-ին կիսամյակում կազմել է 795479,8 հազար դրամ կամ կատարվել է 63,3 %-ով:

2.Տրանսպորտային սարքավորումներ, հոդված 5121՝ նախատեսված 5000,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 3550,0 հազար դրամ կամ կատարվել է 71,0 %-ով:

3. Վարչական սարքավորումներ, հոդված 5122՝ նախատեսված 44553,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 8300,0 հազար դրամ կամ կատարվել է 18,6 %-ով:

4. Այլ մեքենաներ և սարքավորումներ,հոդված 5129՝ նախատեսված 150738,2 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 2334,5 հազար դրամ կամ կատարվել է 1,5 %-ով:

5. Նախագծահետազոտական ծախսեր, հոդված 5134 նախատեսված 22000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1368,0 հազար դրամ կամ կատարվել է 6,2 %-ով:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2024թվականի 1-ին կիսամյակի բյուջեի ծախսային մասն ունի հետևյալ տեսքը.

	Պլան /հազար դրամ/	Կատարված /հազար դրամ/	
Վարչական բյուջե ,	1 286 786,7	941 466,6	73,2%
Ֆոնդային բյուջե	1 478 218,7	811 032,2	54,9 %
Ընդամենը	2 573 674,1	1 642 498,8	63,8%

ԲՅՈՒՋԵԻ ՍԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Արմավիր համայնքի բյուջեի 2024 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 288024,9 հազար դրամ, իսկ առաջին կիսամյակի փաստացի հավելուրդը կազմել է 423478,4 հազար դրամ: